

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԱՆԱՀԻՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

(Ժ. — ԺԷ. Դար)

Ա. — Պողիկարպոս, 966-ը. 970, սկզբ-նաւորած է Վանքին շինութիւնը:

«Ես անարժանս ի կրօնաւորաց վիցուն գրիչ Սիմէռն ի թուականութեան Հայոց Նիվին (972), ի նորաշէն վանքո կոչեալ Սանահին, հրամանաւ հօր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիս շինութեան ամք վեց... Եւս առաւել յիշելոյ արժանի համարեսջիք զհանգուցեալ սուրբ Հայրն մէր առ Քրիստոս Պողիկարպոս, որ սկիզբն արար վանիցս շինութեան եւ փոխեցաւ ի դասս անմարմնոց, որոյ հանգստեան են ամք երկու...»: — Յովհէփեան, Յիշտ. Զեռագրաց, էջ 125-6:

Բ. — Գրիգոր, 970-972. յաջորդած է Պողիկարպոսի, համաձայն Սիմէռն գրչի վերոբրեալ յիշատակարանին, որուն շարունակութեան մէջ կ'ըսէ.

«Եւս առաւել յիշեսջիք զնորին [Պողիկարպոսի] փոխանորդ գուխտի առաջնորդու զհայրն Գրիգոր մաքուր յոյժ եւ ամենայն առաքինի գործովք լցւալ...»: — Նոյն, էջ 126:

Գ. — Յովհաննէս Գիտնական, 973?-979? :

«Առաջնորդ Սանահին՝ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ»: — Ասողիկ, Պատմութիւն, Գ. ը. էջ 181:

Դ. — Եսայի Եպիսկոպոս, 979-1011:

1. — «Ես Սմբատ Բաղրամունի թագաւոր Հայոց... եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահին... եւ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան, եւ սահմանեցի զվիճակ Սր. Աստուծածնիս, եւ սուրբ Հայրս վանաց զԵսայի ետու առնել Եպիս-

կոպոս մէծի Հայրապետին Հայոց եաչկայ...: Գրեցաւ ի թուականիս Հայոց՝ շորս հարիւր քսան եւ ութ»: — Կ. Ղաֆարեան, Սանահինի Վանքը, 1957, էջ 190-191:

2. — «Նե [= 1011] թուականիս Հայոց եւ ի թագաւորութեան Դաւթի եւ յառաջնորդութեան հաւը կանայ, ես Արեթնադոյլ կանգնեցի զիսաչո զայս...»: — Նոյն, էջ 181:

Ե. — Դիտսկորոս, 1037-1063. պահ մը Եղաւ կաթողիկոս (1037-8) եւ ապա նախատինքով վտարուեցաւ աթոռէն (Մ. Ռւոհայցի, էջ 88): Բայց Սանահինի արձանադրութեանց մէջ շարունակեցին զինքը կոչել Հայրապետ:

1. — Ի թուականիս հա. Շժ [= 1061], ի թագաւորութեանն Կիւրիկէի, որդոյ Դաւթի արքաի, ի Հայրապետութեանն Տն. Դիտսկորոսի, ես Շապուհիկս զնեցի ղեւդկատափ եւ ետու յաստուածաշէն մայր քաղաք Սանահին...»: — Նոյն, էջ 147:

2. — «Ի Շժ [= 1063] թուին Հայոց, ի Հայրապետութեանն տեսան Դիտսկորոսի, ի թագաւորութեանն Կիւրիկէի եւ Սմբատայ, ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարասունս եւ զեկեղեցիս, եւ ետու զնորաշէնքս ի Սանահինս վասն իմ մեղաց թողութեանն եւ իմ Եղարցն արեւշտութեան...»: — Նոյն, էջ 187:

Զ. — Յովհաննէս, 1178-1191, Եղած է շինարար եւ արդիւնաւոր առաջնորդ մը:

1. — «Ես ի ՈՒի [= 1178] թուին, ես Գրիգոր Վարդապետ քուերորդի պատրոնացըն՝ նոր շինեցի զայդիս եւ կանգնեցի ըգ-

խաչս յառաջնորդութեան հայր Յովանիսի՝ վասն յիշատակի նորա և ինձ...»:— Նոյն, էջ 188:

2.— «Ոլ. [= 1181] թիւ: ... և Յզ. առաջնորդ սր. ուխտիս շնչեցի գերմանի լեալ զեկեղեցիս աւզնութեամբ ամիր Քրիդին և վարդապետի մեծի Գրիգորի և Քի. Այ., և զգաւիթս ի հմանց, մեծաւ յուսով: Զաշխատակից եղարքս և դհայր Յովանէս զարժանին ամենայն աւրհնութեան, զի յաւուր սոցա կրկին աղատեցան Եկեղեցիքս մէր յամենայն հարկէ, յիշեցէք ի Քո»:— Նոյն, էջ 104-5:

3.— «... և Գրիգոր վարդապետ, որդի Տուուկ Խաչենացո, բնակեալ ընդ հովանեաւ սրբս Աստուածածնիս, կանոնեցի ըդխաչս ի վերա հանգստարանի իմո, ակն ունելով ելից ի կենցաղոյս...: Կանոնեցաւ ի հայրութեանս Յովհանիսի, յորում ամինորդեցաւ կաթողիկէս սուրբ, ի թուին ՈԼԳ. [= 1184]:»:— Նոյն, էջ 180:

4.— «... ի ՈՒ [= 1191] թիւ ... բնկալաք հայրս Յովանէս և միարանք...»:— Նոյն, էջ 106:

5.— Յովհաննէս Խաչենցի, 1205-1208:

1.— «Ի թվականիս Հոց ի ՈՒԴ. [= 1205] ... և հայր Յոհանէս Խաչենցի, եկել բնակեցա ընդ հովանեւ սրբոյ Աստուածածնիս և շնչեցի զշեւրատունս վասն փրկութեան հոգո...: և կանոնեցի ըդխաչս...»:— Նոյն, էջ 183-4:

2.— 1208 թուին կը մասնակցի Լուիի ժողովին— կիրակոս, էջ 83-4:

6.— Գրիգոր որդի Արամայ, նախ Վարդանի և կամ Փիլիպոսի հետ, 1211-1215, և առաջ առանձին, 1215-17:

1.— «Ի թուի ՈՒ [= 1211] ... և վարդան վարդապետն և հայր Գրիգոր ամէն միարանաւքս...»:— Ղոփաղարեան, Արձ. թիւ 51:

2.— «Ի ՈՒ թու. ... Առաջնորդք սր. ուխտիս հայր Վարդան և վարդապետս Գրիգոր, միարանքս հաստատեցաք...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 59:

3.— «Ի Թ. ՈՒԳ. [= 1214] ... ընկալաք մէք՝ առաջնորդ սր. ուխտիս Փիլիպոս հայր և Գրիգոր վարդապետ, ամէն միարանաւքս...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 45:

4.— «Ի թու. ՈՒԳ. [= 1215] ... Առաջնորդք սր. ուխտիս հայր Փիլիպոս և վարդապետ Գրիգոր...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 44:

5.— «Ի ՈՒԳ. թվիս կանոնեցաւ խաչս...: և հայր և վարդապետ Գրիգոր, Վարդան և ամէն միարանքս տոււաք...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 155:

6.— «Ի թուին Հայոց ՈՒԶ. [= 1217] և Գրիգոր վարդապետ, որդի Արամայ, առաջնորդ սր. ուխտիս, ևսու յիստուածածինս խաչ մի մեծ, ժղ գիրք...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 33:

7.— «ՈՒԶ. ... Առաջնորդ հայր վարդապետս Գրիգոր ամէն միարանաւքս ընկալաք...»:— Ղոփաղարեան, Արձ. թ. 49:

Թ.— Յովհաննէս Խաչենցիս, քիւրորդի պարունացն, 1221-1225:

1.— «Թզ. ՈՀ. ... և տէր Յոհաննէս, միարանքս տվաք...»:— Արձ. 56:

2.— «Թու. ՈՀԱ. ... և առաջնորդ սր. ուխտիս տէր Յոհաննէս և միարանքս էտուն...»:— Արձ. 15:

3.— «Թ. ՈՀԱ. էս տէր Յոհաննէս առաջնորդ Սանահնիս էտուն...»:— Արձ. 174:

4.— «Ի թվի ՈՀԴ. էս տէր Յովհաննէս առաջնորդ Սանահնիս, քիւրորդի պարունացն, չինեցի զմատուու. որք հանդչիք սմազեց յաղաւթև յիշեցէք»:— Արձ. 139:

Ժ.— Գրիգոր որդի Արամայ, զարձեալ, 1229-1234:

1.— «Ի թուին ՈՀԸ. ... և Գրիգոր վարդապետ, առաջնորդ Սանահնիս, միարանաւք ընկալաք զշամըկան ընծայս...»:— Արձ. 52:

2.— «Ի թուիս ՈՀԸ. ... և Գրիգոր վարդապետ, առաջնորդ սր. ուխտիս և միարանքս հաստատեցաք...»:— Արձ. 58:

3.— «Ի թվին ՈՀԳ. ... ընդալա և Գրի-

զոր վարդապետ, առաջնորդ Սահմահնիս, ամէն միարանուքս հաստատեցաք . . .»: — Արձ. 127:

ԺԱ. — Աւետիս Վարդապետ, 1240-1256:

1.— **Ի ԹԶԹ:** Առաջնորդ սուրբ ուխտիս Աւետիս վարդապետ և միարանքս տուաք նմա Բ. պատարագ . . .»: — Արձ. 53:

2.— «**Ի Թուիս Զ** . . . Աւետիս վդ. և միարանքս Էտուն մեղ Բ. պատարագ . . .»: — Արձ. 114:

3.— «**Թվի ԶԱ** . . . կանդնեցաւ խաչս առաջնորդութեամբ Աւետիս վարդապետ . . .»: — Արձ. 176:

4.— «**Թվի ԶԴ** . . . Առաջնորդ ուխտիս վդ. Աւետիս և միարանքս . . .»: — Արձ. 132:

5.— «**Թվիս ԶԵ** . . . ևս վդ. Աւետիս, առաջնորդ սր. ուխտիս, ամէն միարանքս տուաք . . .»: — Արձ. 120:

ԺԲ. — Կիրակոս, 1257-1275:

1.— «**Ի Թվիս ԶԶ** . . . Հայրս Կիրակոս և միարանքս Էտուն մեղ Բ. պատարագ . . .»: — Արձ. 115:

2.— «**Ի Թուիս ԶԷ** . . . ևս Հայրս Կիրակոս, առաջնորդ սր. ուխտիս և միարանքս խոստացաք . . .»: — Արձ. 16: Նաեւ 117:

3.— **ԶԺԱ.** — « . . . Հայրս Կիրակոս և միարանքս Էտուն մեղ . . .»: — Արձ. 121:

4.— «**ԶԺԲ** . . . առաջնորդութեան Հաւը Կիրակոսի և այլ եղբարցա . . .»: — Արձ. 118:

5.— «**Թւ. ԶԺԴ:** Մեծաւ յուսով սրբս Աստուածածնիս Հայրս Կիրակոս առաջնորդ սր. ուխտիս . . .»: — Արձ. 113:

6.— «**ԶԺԶ** . . . Հայրս Կիրակոս և միարանքս տուաք . . .»: — Արձ. 126:

7.— **Թվին ԶԻԴ:** « . . . առաջնորդութեանն Հաւը Կիրակոսի և կամակցութեամբ եղբարց . . .»: — Արձ. 128:

ԺԴ. — Յովհաննիս, 1280-1291:

1.— «**Թվին ԶԻԹ** . . . Հայրս Յովհաննիս և միարանքս այլին . . .»: — Արձ. 124:

2.— **Ի Թվին ԶԼԼ:** «Հայր Յովհաննիս և միարանքս Էտուն . . .»: — Արձ. 123:

3.— **Ի ԹՎ.** **ԶԻ:** «Հայր Յովհաննիս և միարանք Էտուն . . .»: — Արձ. 133:

4.— «**ԶԻ:** . . . Տէր Ստեփանոս և Հայր Յովհաննիս և միարանքս Էտուն մեղ . . .»: — Արձ. 116:

5.— 1291: «Տէր Ստեփանոս և Հայր Յովհաննիս և միարանքս այլին . . .»: — Արձ. 64:

ԺԴ. — Ղազար Վարդապետ, 1399-1424:

1.— 1399: «Արդ ի սպառել ժամանակի, և ի վերջին այսօն զարի, զէալ եղեւ մեղ փոփոխելի, զալ բնակիլ ի սմին տեղի . . . Երկու եղբարքս Հարազատ՝ Յովհաննիս և Ղազար սոսկանուն վարդապետ . . .»: — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. զարի, Էջ 625-6:

2.— 1421: Երբ Յովհաննիս զրիչ կ'օրինակէ մէկ Մանրուսմունք «յատ ոստ Ղազար վարդապետի»: — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. զարի, Ա. Էջ 257:

3.— 1424: Աւետարանի մը յիշատակարանէն, որ այս թուականին զրուած է, «Զեռամբ ամենամեղ և փցուն զրշացս՝ Ղազար վարդապետի՝ առաջնորդի սուրբ ուխտիս, և նորին Հարազատի Յովհաննիս վարդապետի»: — Նոյն, Էջ 315-6:

ԺԵ. — Յովհաննիս Արենայ, նկարող, 1437-1447: Իր մասին՝ Շմաւոն վարդապետի Սանահնի վանքին մէջ օրինակած Շարակնոցի յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը.

1.— Գրեցաւ սա . . . ի թվարերութեան Հայկակեան տոմարի ՊԶԶ [= 1437] . . . ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս առն ի-մասոնյ և առաքինի անձին՝ անմարմին ի մարմնի և մարմնով Հաւասարեալ վերին քահանայապետութեանցն, լցեալ երկոքին որակաւն՝ տեսականաւն, գործնականաւն, Համբաւ բարի և դործով սքանչելի և արուեստի նազելի, արդեալ ի յոկունց և բարգաւատնեալ ամենայն լեզուաց, զոր բազում աշխատութեամբ, որ ի ճշգանցն նուազեալ Հայր և վասն յուսոյ արքայութեանն և բազում գըթոյն Հայրախնամ, զոր ունէր առ մեղ՝ տէր Յովհաննիս, ամե-

ներին նմանեալ անուանակցին իւր՝ սիրելի աշակերտին, թողեալ զմարմնոյ տկարութիւնն վասն ազաշանաց և սիրոյ մերոյ և զարդարեաց զսա սովինեական ոսկով և բազմերանկ գունով, և զցրուեան կտորով ի մի ժողովեաց և ընձեռեաց մեղ վասն իւր բազում զթոյն։ Զոր Տէր Աստուած զարդարեացէ զսայ երկոքին կենաւքն, հանդերձ իւրանաւքն, արեան մերձաւորաւքն և ձեռնասուն աշակերտաւքն՝ Ներսէս կուսակաւնի և քաջ Փիլիսոփոյի, և ԲէՀնուշ դպրի, և Վարդան սարկաւադի . . .» — Նոյն, էջ 468։

Նոյն ձեռագրին մէջ ինքն ալ արձանադրած է փոքր յիշատակարան մը, որ ահաւասիկ «Զերանաշնորհ» և զերջանիկ բարունին զնմաւոն՝ զառաշնորդ և զմերադիտող տուագելական աթոռոյն Սիխնաց՝ ըղգրիչ և զստոցող ոսկեճաճանչ բուրաստանիս յիշեցէք Վերափոխման Տիրամօր տօնիս։ Ծնդ նմին եւ զաշխատեալս ի սմա, ըղրազմարիծ մեղօք տուակեալն՝ զՅոհանէս նկարող աղաշեմ յիշել սրտի մտօք ի մեղաց թողութիւն, զի որով չափով չափէք և ձեղ եղիցի» — Նոյն, էջ 470-471։

2. — Սանահինի մէջ, 1441ին, Տէրունական արեղայ օրինակած է Աւետարան մը, մաղաղաթի վրայ, զոր նկարազարդած է իր ուսուցիչը Յովհաննէս վարդապետ, ինչպէս կը յայտնուի իրենց յիշատակարաններով։

«Արդ ևս Տէրունական արեղայս . . . գըրեցի զԱւետարանս . . . եւ ետու ծաղկել Յովհաննէս վարդապետի Տիրական պատկերաւք, բոլոր տնօրինականաւք, վառաւոր աւետարանչօք և զեղեցկատեսիլ խորանօք և դիւրահայեաց ծաղկաւք և զոյներանկ զեղօք և ծերացեալ ալեօք աշխատեալ . . .» — Բազմավէկպ, 1950, էջ 273։

«ԶՅովհաննէս մեղապարտ նկարիչ աղաշեմ յիշել ի մեղաց թողութիւն վասն սիրոյն Քրիստոնի» — Նոյն, էջ 272ա։

3. — Յովհաննէս եպս. Կաֆայեցի, 1447ին, կը ստանայ Գրիգոր Տաթեւացիի Քարոզգիրքը, ըստ երեւոյթին օրինակուած վերոյիշեալ երկու Գրիշներու կողմէ։ Ահաւասիկ յիշատակարանին սկզբնական մասը.

«Ի Բժ. ՊՂԶ. . . : Արդ, զրեցաւ առաքելական և մարդարէական, աւետարանական և վարդապետական, աստուածաբուխ հողիալից տառս այս ձեռամբ Տէրունական և Յոհաննէս կրօնաւորի Սանահնեցոյ . . .» — Խոչիկեան, Յիշու. ԺԵ. դարի, Մասն. Ա. էջ 607։

ԺԶ. — Բարսեղ Արք. Արդուր Եան, 1469-1507։ Իր անունը կ'երեւի քանի մը յիշատակարաններու մէջ ինչպէս,

1. — 1469. — «Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Շարակինոց . . . ի դրանն սուրբ Աստուածածնի որ Սանահին այժմ յարջործի, ի թվականիս Հայոց Զժի՞ : Ի կաթողիկոսութեան Տէր Արքստակիսի և յառաջնորդութեան սուրբ Ուխտիս՝ Տէր Բարսեղի . . .» — Կիւլէսէրեւան, Յուցակ Զեռ. Դալաթիոյ, 1961, էջ 1042։

2. — 1475. — «Եւ արդ ես . . . զծազրեցի զսա . . . ի յաստուածաբնակ վանքս, որ կոչի Սանահին . . . ի յառաջնորդութեան տէր Բարսեղ Եսլիսկոպոսի . . . ի թուակութեանս Հայոց Զի՞Դ» — Յիշու. ԺԵ. Դարսի, Բ. էջ 374։

3. — 1504. — «Արդ . . . եղեւ աւարտումն սր. Աւետարանիս ի զուռն մաւրս լուսոյ սր. Աստուածածնիս Սանահնոյ . . . ի յառաջնորդութեան սր. ուխտիս տէր Բարսեղ Կրանաւորին . . .» — Սիռն, 1963, էջ 247։

4. — 1507. — «Արդ ես յետինս ի ծընունդս եկեղեցւոյ, և անարգս յամենայնի Մկրտիչ մեղապարտ ողի, ծնեալ եւ սնեալ մօրս լուսոյ զբան սր. Աստուածածնիս Սանահին, ի թուականիս Հայոց ԶԺԶ, առաջնորդութեան սր. ուխտիս տէր Բարսեղ Եպիսկոպոսի։ Որ եւ ես ըստ կարի տկարութեան իմոյ յուսով անմահին եւ սիրով Հողոյն Սրբոյ զրեցի սա յիշատակ հոգւոյ իմոյ, և ծնողաց իմոց՝ Խաչատրին եւ Ռոկիկին . . .» — Զեռ. Ս. Յ. թ. 1629, Շարակինոց, էջ 721-2։

ԺԷ. — Ղուկաս Արիիեալիսկոպոս, 1514-1534։ Սա իրեւ առաջնորդ յիշուած է 1514 թուին (Ղափ. էջ 190)։ 1517ին (Պա-

կեան, Գուղարքի Վանքերը, 1960, էջ 127)։ 1520ին (Ղաֆ. Արձ. թ. 101)։ Եւ 1534ին, Աւետարանի մը յիշատակաբանին մէջ, զոր օրինակած է Տէրունական զրիչ «ի յաստուածաբնակ Վանքս Սանահին, ընդ Հովանեաւ Մատրո լուսոյ սուրբ Աստուածածնիս, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ղուկաս բարունապետիս և Ղուկաս արհիելպիս կոպոսի եւ այլ միաբանիցու...» (Գուղարքի Վանքերը, էջ 128)։

ԺԲ. — Ղուկաս Արիեապու. Արդուր Եասից, 1591- վ. 1634- ի ըրեւ առաջնորդ կը յիշուի Ռեն թուին (Գուղարքի Վանքերը, էջ 129)։ Վախճանած է 1634ին։ Տապանաքարին վրայ կայ Հակիբը սա արձանագրութիւնը. «Ղուկաս հպիսկոպոս աղդէն Արդութեցի. թ. ՌԶԳ» (Ղաֆ. էջ 175)։

ԺԲ. — Սարգիս Արիեապու. Արդուր Եասի, որդի Բերեկի, 1634- վ. 1681։ Նորոգութիւններ կատարած է Վանքին մէջ։

1652ին կը յիշատակէ իր կատարած նորոգութիւնները. «Ի թվին Հայոց ՌՃԱ. ... Ես Սարդիս Արհեսպու., որդի Մէլիքին, աղդէ Արդութիւն, ծառայ որ. ուխտիս, որ է սըրբոց բնակաբան, Բագրատուանեաց Հանդըստարան, Հանդերձ միաբանաւք նորոգեցի Ամենափրկիչն և Աստուածածնին, զանկակատունն, որ. Գրիգորն, Նշխարախուցն, ամէն» (Ղաֆ. Արձ. թ. 14)։

Նոյն թուականին հրովարտակ մըն ալսացած է Վրաց Ռոստոմ թագաւորէն Հաստատելու Համար Սանահինի կալուածները, և Հարկերէ աղաս Ըլլալը (Գուղարքի Վանքերը, էջ 132-134)։

Վախճանած է 1681ին և թագուած Սանահինի ներքին ժամանակ մէջ։ Տապանաքարին վրայ կը կարգացուի. «Թվ. ՌՃԱ. Այս է տապան Սարգսի հպիսկոպոսին և նորոգութ մէնաստանիս» (Ղաֆ. Արձ. թ. 36)։

Ն. ԵՊՄ. ՇՈՎԱԿԱՆ

